ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա «17» նոյեմբերի.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ N 3067

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Էմիլյա Արմենի Գյուլզադյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված 30.09.2022թ. N 30840/2022//ԿՈՒՎ4/Ա արձանագրության ֆիզիկական անձ Էմիլյա Արմենի Գյուլզադյանի (հասցե՝ ք.Երևան, Ա.Ավետիսյան փող., 70 շ., 79, ՀՎՀՀ՝ 72959834, ՀԾՀ՝ 6003910658, անձնագիր՝ AT0353381) չկատարված հարկային պարտավորությունը 30.09.2021 թվականի դրությամբ կազմել 124.469 ՀՀ դրամ, որից հարկ՝ 116.850 ՀՀ դրամ, տույժ՝ 7.619 ՀՀ դրամ:

Վերոնշյալ հարկային պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 12.10.2022թ. հարուցվել է վարչական վարույթ ֆիզիկական անձի չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին վերջինս պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վերջինս չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձի կողմից 2020թ-ին ձեռք են բերվել թվով 2 տրանսպորտային միջոցներ, որոնք օտարվել են 2021թ-ին ձեռք բերելուց հետո 365 օրվա ընթացքում:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական

գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150–րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից:

Ֆիզիկական անձ Էմիլյա Արմենի Գյուլզադյանի կողմից ավտոմեքենայի օտարումից եկամտային հարկը չի հաշվարկվել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30. 12. 016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 30.09.2022 թվականի դրությամբ կազմում է 124.469 ՀՀ դրամ, որից հարկ՝ 116.850 ՀՀ դրամ, տույժ՝ 7.619 ՀՀ դրամ:, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից տրանսպորտային միջոցի օտարման գործարքի մասով հաշվարկված պարտավորությունից և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժից:

Գանձման ենթակա չկատարված հարկային պարտավորության հարկի գումարի նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր: ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն սույն որոշմամբ գանձման (վճարման) ենթակա պարտավորությունները ենթակա են կատարման մինչև կատարման օրը՝ Օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Ֆիզիկական անձ Էմիլյա Արմենի Գյուլզադյանից գանձել **124.469 ՀՀ դրամ** պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

30 .09.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները

գանձելու վերաբերյալ **Չափման միավորը՝ դրամ**

Հ/Հ	**Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը**	**Հաշվարկված հարկ/վճար**		**Հաշվարկված տույժ**	**Հաշվարկված տուգանք**	**Ընդամենը**	**Վճարման ուղղությունը**	**Հաշվի համարը**
		առաջացման ամսաթիվ	**գումար**					
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7= 4+5+6**	**8**	**9**
	Եկամտային հարկ	**20.04.2022թ.**	116.850	7.619	-	124.469	**պետական բյուջե**	900008000490

2.Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման՝ ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:

3.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն հարկ վճարողի կողմից ստանալու օրվան հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին կամ վարչական մարմնի վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով, կամ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ԻՎ ՀԳ և ՊԿԱ
բաժնի գլխավոր մասնագետ
Վլադիմիր Ավետիսյան
հեռ.՝ 010-30-91-91 (91-48)